ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1964 Общественные науки

Վ. Ի. Ավագյան

ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻ ԳԻՇԱՏԻՉ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ (1919—1921)

Սովետական իշխանության հաղթական երթը Ռուսաստանում իր դեմ էր հանել ոչ միայն միջազգային իմպերիալիզմին, այլև Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններին։ Անգլո-ամերիկյան ինտերվենտների ռազմատենչ ձգտումները մոլեռանդ կերպով պաշտպանում էին Անդրկովկասի բուրժուա-կալվածատիրական ռեակցիոն իշխանություններն ու նրանց ստորաքարշ կուսակցությունները, որոնք հայրենիքն ու նրա հարստությունները վաճառել էին Անտանտի իմպերիալիստներին։ Մենշևիկները, մուսավաթականներն ու դաշնակներն իրենց օտարերկրյա տերերի հետ միասին անողորմաբար շահագործում ու կողոպտում էին խաղաղ բնակչությանը, մահապատժի ենթարկում հազարավոր անմեղ մարդկանց, դաժանորեն հալածում բոլշևիկներին, առաջավոր բանվորներին ու գյուղացիներին։ «...Երբ,—գրում էր Լենինը,—գործը հասնում է կապիտալիստների ու կալվածատերերի մասնավոր սեփականությանը, նրանք մոռանում են հայրենիքի և անկախության նկատմամբ տածած սիրո իրենց բոլոր ֆրազները։ Մենք շատ լավ գիտենք, որ կադետները, աջ էսեռները և մենշևիկները իմպերիալիստական տերությունների հետ դաշնակցելու, կողոպտչական պայմանագրեր կնքելու, հայրենիքը անգլո-ֆրանսիական իմպերիալիզմին մատնելու տեսակետից ռեկորդ են շահել։ Օրինակ՝ Ուկրաինան և Թիֆլիսը։ ...Երբ խնդիրը վերաբերում է դասակարգային շահույթներին, բուրժուազիան հայրենիքը վաճառում է, իր ժողովրդի դեմ ուղղված շարշիական գործարքներ է կնքում ամեն տեսակ օտարերկրացիների հետ»[1]։

Այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչու գերմանա-թուրքական և անգլո-ամերիկյան ինտերվենտների ռազմատենչ ձգտումները եռանդուն պաշտպանություն էին գտնում ի դեմս Անդրկովկասի բուրժուա-կալվածատիրական ռեակցիոն իշխանությունների ու նրանց շահերն արտահայտող կուսակցությունների, որոնք անգլո-ամերիկյան իմպերիալիստներին էին վաճառել Ռուսաստանի անբաժանելի մասը կազմող Անդրկովկասը։ Օտարացած իրենց հողում, որպես իմպերիալիզմի ստոր սպասարկուներ և ծախու դրածոներ, մենշևիկյան, մուսավաթական, դաշնակցական ռեակցիոն, հակառևոլյուցիոն ուժերը և նրանց կառավարությունները գիշատիչ իմպերիալիստներից ստացած ֆինանսներով, զինամթերքով և այլ նյութական միջոցներով Անդրկովկասը վեր էին ածել լայն ճանապարհի պանդոկի, ավազակների կեղտոտ որջի «ուր,—գրում է Ա. Միկոյանը 1919 թվականին,—մերթ հերթով, մերթ միասին այցելում են գիշատիչ իմպերիալիստները, քաղաքակրթված բանդիտները, մերթ

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 131, 1951, Երևան։

գերմանացիները, մերթ թուրքերը, անգլիացիները, ամերիկացիները, իտալացիները և այլ սրիկաներ գալիս են, տեր ու տնօրինություն անում, կողոպտում, բռնանում և ուզածին չափ անարգելով աշխատավոր մասսաներին, հեռանում են հարուստ ավարով, որպես շնորհակալություն թքելով որջը պահող կովկասյան ռեսպուբլիկաների կառավարության քծնող ռեխին, կառավարություններ, որոնք անպարկեշտ պրոֆեսիայի կանանց նման փնտրում են նոր տերերի»[2]։

Այդ վարձկանների ստոր ծառայություններով, գերմանա-թուրքերը Անդրկովկասի օկուպացումը սկսեցին Վրաստանից և իրենց տիրապետության մի քանի ամսվա ընթացքում ամայի դարձրին երկրամասը։ Առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմում ավստրո-գերմանական կողմի պարտությամբ Անդրկովկասն անցավ նոր տերերի՝ անգլո-ամերիկյան գիշատիչ իմպերիալիստների ձեռքը, որոնք երկրամասի ժողովուրդների քաղաքական և տնտեսական ստրկացումը սկսեցին Ադրբեջանից՝ Բաքվի գրավումով։ Նրանք մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների ակտիվ աջակցությամբ Անդրկովկասում հաստատեցին արյունալի ճնշման և ավազակային կողոպուտի ծանր ռեժիմ։ Հիմնվելով Բաքվում, անգլիական հափշտակիչները թալանեցին ադրբեջանական ժողովրդի սեփականությունը, գրավեցին Բաքու—Բաթումի նավթամուղը, տիրեցին երկաթուղային տրանսպորտին, Կասպիական նավատորմի նավերի մի մասին և սկսեցին անարգել արտահանել նավթը։ Այսպես, օրինակ, Անտանտի ռազմական շտաբը միայն 1918 թ. դեկտեմբերին նավթամուղով տեղափոխել է 15643 փութ նավթ և բենզին, իսկ ծովով դեպի Պարսկաստան՝ 7037 փութ, 1919 թ. հունվարի 1—20-ը արտահանվել է 8466 փութ նավթ ու բենզին։ Մեկ ամիս 20 օրում Բաքվից դուրս է տարվել 24109 փութ 15 ֆունտ նավթամթերք, առանց վճարման արտահանվել մոտ 1,5 միլիոն փութ նավթ, Ադրբեջանին պատճառելով 17 միլիոն 220536 ռուբլու վնաս[3]։ Անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գերշահույթի ստացումը ապահովում էր բրիտանական հրամանատարությունը, որի զորքերը տրորում էին Անդրկովկասի աշխատավորների անձեռնմխելիությունը, խիղճն ու պատիվը։ Բրիտանական գլխավոր շտաբը հանդիսանում էր կարգադրիչ մարմինը Բաքվում և ամբողջ Անդրկովկասում։ Օկուպանտները ադրբեջանական ժողովրդի քաղաքական և տնտեսական ստրկացումը իրականացնում էին կառավարական ապարատում նստած իրենց ներկայացուցիչների միջոցով։ Այսպես, օրինակ, հաղորդակցության ճանապարհների մինիստրությանը կից գործում էր Անդրկովկասի երկաթուղային պետի բրիտանական լիազորը, որը երկաթուղու մաքսային պաշտոնյաներից պահանջում էր.

1. «...անգլերեն և ռուսերեն տպված բրիտանական և ռազմական պիտակներ կրող և կապարով կնքված վագոնները անցնեն առանց ստուգելու։

2. ...այդ վագոնները կպարունակեն միայն բրիտանական ռազմական բեռ։ Ամեն մի գնացք կունենա այդպիսի վագոնների անգլերեն և ռուսերեն ցուցանիշներ։

---

2 Մեջբերումը կատարվում է ըստ Գ. Բ. Ղարիբջանյանի «Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում» գրքի, Հայպետհրատ, 1955, էջ 231։

3 ЦГАОР Азр. ССР, ф. 970, д. 59, л. 38.

3. ...այդ կարգադրությունը կարվի հօգուտ գեներալ Բերֆի»[4]։

Ադրբեջանի մուսավաթական կառավարությունն իսկույն կատարելով բրիտանական իշխանությունների այդ պահանջը՝ 1919 թ. մարտի 27-ին, ծառային հատուկ հաճոյակատարությամբ անգլիական հրամանատարությանը պատասխանում է.

«Պատիվ ունեմ հաղորդել, որ կառավարությունը քննության առնելով այդ նամակներում շարադրված դիմումները, որոշեց հայտնել Ձեզ, որ բրիտանական ամեն տեսակ ռազմական բեռները, այն է՝ ռազմական հանդերձանքի առարկաները և ռազմա-տեխնիկական առարկաները անարգել բաց կթողնվեն՝ հենց որ բրիտանական շտաբի համապատասխան ներկայացուցիչներից ստացվի գրավոր հաղորդագրություն, ըստ որում վագոնների վրա պետք է լինեն անգլերեն և ռուսերեն պիտակներ։ Այդ մասին արված է համապատասխան կարգադրություն։ Կառավարությունը կարգադրել է, որ նշված մինիստրությունները դաշնակից հրամանատարությանը թույլտվություն տան Ադրբեջանի վրայով անարգել արտահանելու բոլոր տրանզիտ ապրանքները։

Ի վերջո անհրաժեշտ ենք գտնում ավելացնել, որ բրիտանական զորքերի Ադրբեջանի սահմաններում լինելը մենք ամենևին զինվորական օկուպացիա չենք դիտում»[5]։

Բրիտանական ինտերվենտների նկատմամբ ցուցաբերվող հաճոյակատարությունը շարունակվում է նաև հետագա ամիսներին։

Օտարերկրյա ինտերվենտները ոչ միայն զավթողական քաղաքականություն էին վարում, այլև ոտնահարում էին, այսպես կոչված, Անդրկովկասի անկախ ռեսպուբլիկաների տարրական իրավունքները։ Այդ են վկայում Ադրբեջանի և Վրաստանի դիվանագիտական գրասենյակների մի շարք բողոքներն՝ ուղղված Անդրկովկասի անգլիական ռազմական ուժերի հրամանատարին։ Դրանցից մեկում խոսվում է այն մասին, որ 1919 թ. մարտի 10-ին, անգլիական երկու սպայի կարգադրությամբ, Բաթումիի կենտրոնական ոստիկանական բյուրոյում բացվել են Ադրբեջանական ռեսպուբլիկայի արտաքին գործերի մինիստրությանը Կոստանդնուպոլսից ուղարկվող ծանրոցներն ու ծրարները։ Նույնպիսի փաստի մասին է հայտնվում նաև Ադրբեջանի արտաքին գործերի մինիստրին ուղղված 1919 թ. հոկտեմբերի 8-ի հեռագրում։

Իրենց ամբարտավան էին պահում նաև ամերիկացիները։ Ադրբեջանի արտաքին գործերի մինիստրին հասցեագրված իր 1919 թ. օգոստոսի 8-ի զեկուցագրի մեջ Ղաբաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետ Հ. Սուլթանովը գրում է. «Վերջին ժամանակներս Շուշի են գալիս ամերիկացիները, որպես ինչ որ կազմակերպությունների ներկայացուցիչներ, առանց Ադրբեջանական կառավարության գիտության և առանց տեղական կառավարության օրգաններին որևէ մանդատ ներկայացնելու»[6]։

Բաքվում 1919 թ. օտարերկրյա զինվորականների անկարգություններն ու խուլիգանությունները հասել էին անասելի չափերի։ Ապրիլի 1-ին Բաքվի մի խումբ բնակիչներ մուսավաթական կառավարության ներքին գործերի մինիստրությանն են դիմում անգլիական զինվորների կողմից սիստեմատիկ

---

[4] «Пролетарская революция», № 8 (20), 1923, М.—Л., стр. 59.

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում։

բնույթ կրող խուլիգանությունները կանխելու մասին։ Նրանք գրում են. «Ուժ չկա լռության մատնել այն խայտառակությունները, որոնք կատարվում են անգլիական զինվորների կողմից... Մեր բողոքներին ոչ ոք ուշադրություն չի դարձնում, իսկ ոստիկանությունը չի ուզում խառնվել այն գործերին, որոնք կապված են անգլիացիների հետ։ Զինվորներն իրենց այնքան լկտի, խայտառակ և անքաղաքավարի են պահում, որ կանայք բոլորովին ի վիճակի չեն լինում դուրս գալ փողոց, երբ այնտեղ անգլիական զինվոր է լինում։ Հարբած թափառում են, չեն թողնում անցնել փողոցով, կանգնեցնում են կանանց, կատարում են անիմաստ շարժումներ։ Թատրոններում, կրկեսներում անգլիացիները նստում են առաջին կարգում և բացահայտ կերպով գինի են խմում, ծխում են, սուլում և գոռում։ Մի՞թե դրանք կուլտուրական ժողովուրդ են։ Խայտառակությունների մասին գրել էին լրագրում, բայց ոչինչ դուրս չեկավ»[7]։

«1919 թ. ապրիլի 13-ին «Մեղվեկ» առաջին կարգի ռեստորանի տերը... հայտնեց, որ երեկ, մոտավորապես ժամը 10-ին, երեկոյան ռեստորան եկան մոտ 30—35 անգլիական սպաներ՝ ծայրահեղ հարբած վիճակում։ Մտնելով ռեստորան, նրանք սկսեցին պարել, պատռել սեղանի սփռոցները, գոռում էին, վայրենություններ էին անում, երգում էին, փողոց էին շպրտում ռեստորանում գտնվող հյուրերի գլխարկները։ Սպաներն իրենց չափազանց վրդովեցուցիչ էին պահում։ Տեսնելով այսպիսի խայտառակությունները, հյուրերը թողեցին իրենց ընթրիքը և հեռացան։ Այդ խայտառակությունը շարունակվում էր մինչև ժամը 12-ը։

5-րդ տեղամասի լիազորի օգնական (ստորագրություն)»[8]։

Արխիվային փաստաթղթերում կան բազմաթիվ հետաքննության արձանագրություններ ու տեղեկություններ, որոնք անհերքելիորեն հաստատում են չափը կորցրած օկուպանտների խժդժությունները։ Անգլիական գաղութարարները լիկվիդացնում էին ժողովրդական կրթության հատ ու կենտ դպրոցները, դրանք վերածելով գոմերի և պահեստների։

Ադրբեջանական մուսավաթական կառավարության արտաքին գործերի մինիստրության արխիվում կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք սպառիչ կերպով մերկացնում են օտարերկրյա ինտերվենտների կատարած թալանչիական քաղաքականությունը Ադրբեջանի օկուպացման կարճատև ժամանակաշրջանում։ Անգլիական հրամանատարությունը Բաքվում գտնվելու ժամանակաշրջանում արտահանել է զգալի քանակությամբ նավթամթերք, որի համար չի վճարել ակցիզներ և մաքսեր։ Այսպես, օրինակ, առ 1-ը սեպտեմբերի բրիտանական շտաբը ադրբեջանական բանկին պարտք է եղել նավթային ակցիզներ 32000 ռ. 54 կոպ., արտահանված զանազան ապրանքների մաքսեր՝ 74342 ռ. 88 կոպ., կոնյակի և օղու ակցիզներ՝ 1950 ռուբլի—ընդամենը մաքսերը և ակցիզները առ 1-ը սեպտեմբերի կազմում են 36,701,800 ռ. 50 կոպ.[9]։

Անգլիացիները սույն պահանջներին աշխատում են տալ ձևական մերժում։ Բրոֆը 1919 թ. սեպտեմբերի 18-ին ֆինանսների մինիստրին գրում է. «Ի պատասխան Ձեր սեպտեմբերի 17-ի № 5964 գրության հայտնում եմ, որ ինձ մոտ, Թիֆլիսում, փետրվարի 4-ի նիստում, որտեղ մասնակցում էր

---

7 ЦГАОР Азр. ССР, ф. 894, оп. 4, д. 90, л. 3.
8 ЦГАОР Азр. ССР, ф. 894, оп. 4, д. 93, л. 23.
9 Նույն տեղում։

առևտրի մինիստրը, որոշվեց, որ Թիֆլիսի բրիտանական շտաբի պահանջով նավթամթերքները բաց կթողնվեն նույն այն պայմաններով, որով բաց են թողնվում վրացական երկաթուղով, այսինքն՝ առանց մաքսային և ակցիզային մուծումների»[10]։ Անգլիական գեներալ Վոդանի 1919 թ. օգոստոսի 23-ի նամակում, որն ուղղված էր ռուսական պետական բանկի Բաքվի բաժանմունքի բրիտանական կառավարչին, խոստովանվում է ինտերվենցիայի ժամանակաշրջանում անգլիական կառավարության Ադրբեջանին ունեցած պարտքի մասին։

Անտանտի ինտերվենտներն Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի ակտիվ աջակցությամբ կողոպտել և ամայացրել էին երկրամասը, ֆիզիկական ոչնչացման եզրին հասցրել Անդրկովկասի ժողովուրդներին, ծվեն-ծվեն արել ժողովրդական տնտեսությունը։ Վրացական մենշևիկները, որոնք իրենց դեմոկրատներ ու սոցիալիստներ էին հայտարարել, ոգեշնչում և սնում էին Անդրկովկասի հակառևոլյուցիոն, ռեակցիոն ուժերին, ստորաքարշ ծառայություն էին մատուցում Անտանտի ավազակային իմպերիալիստներին՝ իրենց գաղութային քաղաքականությունն Անդրկովկասում իրականացնելու համար։

«Բորբա» մենշևիկյան թերթը 1919 թ. նոյեմբերի 11-ին գրում է. «Հաստատունացող խաղաղությունը առաջին հերթին բրիտանական խաղաղություն կլինի» և ապա հույս է հայտնվում, որ «Անգլիան հաստատուն կերպով կամրանա Անդրկովկասում»։

Սովետական իշխանության դեմ կռվում՝ մենշևիկները ոգեշնչում էին անգլիական իմպերիալիզմին և ցույց տալիս, որ իրենք տնտեսության ու քաղաքականության մեջ անգլիական կապիտալի շահերի արտահայտիչներն են հանդիսանում. «Հաղթանակող Անգլիայում,—գրում էր նույն համարում «Բորբա»-ն,—հատուկ ուշադրությամբ կվերաբերվեն ամենահարմար ճանապարհի նկատմամբ դեպի Հյուսիսային Պարսկաստան, որը տարածվում է Անդրկովկասով, մանավանդ որ այդ ճանապարհը կապում է Եվրոպան Ասիայի հետ»։

Վրացական մենշևիկները տնտեսա-քաղաքական արտոնություններ էին շնորհում ինտերվենտներին, ծառայում ու կերակրում նրանց, սյուրպրիզներ կատարում և ուղեկցում երկրամասի շահութաբեր օջախները։ Վրացական կառավարությունն իր պլաններն այնպես էր կազմել, որ դրանք ուղղակի առնչվեն այն պլանների հետ, որ արդեն ունեին բրիտանական ինտերվենտները Անդրկովկասի նկատմամբ։ Անգլո-ամերիկյան ինտերվենտները չբավարարվելով մենշևիկների ստորաքարշությունով, անընդհատ հետաքրքրվում էին Անդրկովկասի և հատկապես Վրաստանի ներքին դրությամբ։ Նրանց մեջ տագնապ էր առաջացնում հեղափոխական իրադրության առկայությունը։ Անդրկովկասը նրանց համար բոլշևիկորեն տրամադրված, վտանգավոր մի օջախ էր։ Այդ է ասում 1918 թ. դեկտեմբերի 16-ին Բաթումիում մենշևիկյան կառավարության հատուկ լիազորի հաղորդագրությունը՝ ամերիկյան միսիայի ղեկավարի հետ իր ունեցած զրույցի մասին։ Ամերիկյան միսիայի նախագահ, միջազգային իրավունքի պրոֆեսոր, Չիկագոյի համալսարանի ռեկտոր Վադսոնը մի շարք հարցեր է առաջարկել Վրաստանի կառավարությանը։

«Հարց.—Կարո՞ղ եք արդյոք դիմադրել բոլշևիկների գրոհին Հյուսիսից։

---

10 Նույն տեղում։

Պատասխան.—Այո՛, սահմանի վրա, լեռնանցքներում կան ամրություններ, որոնք անվախ կարող են դիմադրել բոլշևիկների գրոհին։

Հարց.—Դուք գիտե՞ք, որ Անգլիան և Ամերիկան հանդիսանում են ողջ աշխարհում կարգի հաստատման պլանի և հայտնի սկզբունքների անցկացման կողմնակիցներ. նրանց միջև գոյություն ունի լիակատար միասնություն և համերաշխություն։ Այդ պատճառով մենք կցանկանայինք իմանալ, կարո՞ղ էիք արդյոք դուք օգտակար լինել Անգլիային, հետևաբար և մեզ՝ բոլշևիկների դեմ մղվող պայքարում և կարգի հաստատման համար։

Պատասխան.—Մեր ռեսպուբլիկան բոլոր միջոցներով և ուժերով կաջակցի տերությունների համաձայնությանը՝ բոլշևիկների դեմ մղվող պայքարում և կարգի հաստատման խնդրում։

Հարց.—Անգլիացիները կլինեն ձեր հարևանները։ Մեզ, իբրև անգլիացիների բարեկամների, հետաքրքրում է, թե ինչպե՞ս դուք կվերաբերվեք դրանց։

Պատասխան.—Մեծ ուրախությամբ, քանի որ անգլիացիների նման քաղաքակրթված հարևան ունենալը օգտակար է և հաճելի։

Հարց.—Ինչպիսի՞ն է ձեր վերաբերմունքն Ամերիկայի նկատմամբ։ Մենք տեղեկություններ ունենք, որ երբ Ամերիկան մտնում էր համաձայնության շարքերը, ձեր թերթերը գրում էին, որ Ամերիկայում հաղթահարեց միլիտարիզմը, որը և շարժում է նրան Գերմանիայի դեմ։

Պատասխան.—Երբ Ամերիկան դուրս եկավ Գերմանիայի դեմ, մենք բոլորս Ռուսաստանի հետ միատեղ պայքարում էինք ընդհանուր թշնամու՝ Գերմանիայի դեմ, և կարող էինք միայն ուրախանալ Ամերիկայի նման հզոր պետության օգնությամբ»[11]։

Վախենալով Անդրկովկասի ըմբոստացած աշխատավորներից և նրանց զինված ելույթներից, ինտերվենտները ելքը որոնում էին բնակչության զինաթափման մեջ։ 1919 թ. հունվարի 21-ին Բաթումիի անգլիական ռազմական նահանգապետ գեներալ Կուկ-Կուլլիսը հրաման է տվել ազգաբնակչության զինաթափման վերաբերյալ։

Վրացական մենշևիկյան կառավարությունը շարունակում էր պայքարը բոլշևիկների դեմ և պահանջում էր ինտերվենտներից օգտագործել բոլոր ուժերը՝ բոլշևիկների ներխուժման դեմ պայքարելու և երկրում «կարգ սահմանելու» համար։

Անտանտի զավթիչները, Ա. Ի. Միկոյանի արտահայտությամբ՝ «դերժիմորդաները» հայտնեցին իրենց պատրաստակամությունը օկուպացիոն ռեժիմի ուժեղացման և Անդրկովկասին սպառնացող բոլշևիկյան վտանգից պաշտպանվելու մասին։

Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները հենարան ունենալով նացիոնալ-մենշևիկներին և դաշնակ բախտախնդիրներին, «անկախ» ռեսպուբլիկաների նկատմամբ վարում էին ծվատիչ քաղաքականություն։ Այդ թալանչիական, ավազակային քաղաքականությունը լիակատար կործանման հասցրեց հատկապես Հայաստանի տնտեսությանը և սովի մատնեց աշխատավոր բնակչությանը։ Ոգեշնչվելով «Մեծ Հայաստան» ստեղծելու ցնորքով, դաշնակցությունը կազմակերպում էր հայ-վրացական և հայ-ադրբեջանական եղբայրասպան կռիվներ, որոնք հրահրվում էին օտարերկրյա ինտերվենտների կողմից։

---

[11] ЦГАОР Груз. ССР, ф. 13, д. 121, л. 27.

մեծ ավերածություններ բերելով Անդրկովկասի բանվորներին և աշխատավորությանը։ Անգլո-ամերիկյան ինտերվենտները ստեղծված այդ դրությամբ նպատակ ունեին պառակտելու Անդրկովկասի ժողովուրդների ուժերը, կասեցնելու ռևոլյուցիոն վերելքը, դառնալ երկրի տերն ու տնօրենը։ 1919 թ. ապրիլի 18-ին գեներալ-լեյտենանտ Հուրեր Գուքը «Թայմս»-ի խմբագրին գրած նամակում հիշեցնում էր, որ անհրաժեշտ է Անդրկովկասն առնել Անգլիայի տիրապետության ներքո։

Նա գրում է. «Պարոն, մեծ հետաքրքրությամբ կարդացի ձեր թղթակցի՝ հարավային Ռուսաստանի վերաբերյալ թղթակցությունը, հրատարակված ձեր թերթի ամսույս 14-ի համարում, «Կամավորական բանակը» վերնագրով։ ...Այս վերջին պետությունը ցանկանում է լինել և կլինի մեծ Հայաստան, որը պետք է կազմվի հին տաճկական կայսրությունից։ Այժմ թեև այս երեք ազգությունները ժամանակավորապես կազմել են երեք անկախ պետություններ, շնորհիվ անգլիական պաշտպանության, նրանք իրար ատում են... Անգլիան մեծ բան չի կորցնի, եթե բավականին մեծ ուժ պահի Անդրկովկասում... Մոտավորապես երկու դիվիզիա անգլիական կամ հնդկական զորք, մեկ-երկու տարվա համար բավական կլինի և միևնույն ժամանակ տեղում կարելի է կազմակերպել ոստիկանական ուժ... Անդրկովկասն այնքան բնական աղբյուրներ ունի, ի միջի այլոց, նավթի հանքեր, որ կարող է մեծ հարստություն դիզել... և բրիտանական կամ մի այլ մանդատավորի զորքերի ծախսերը պետք է ստացվեն տեղական աղբյուրներից... Չպետք է աչքաթող անել, որ արդեն բրիտանական և եվրոպական կապիտալը մուտք կգործեն այս երկրի մասերը։ Խնդիրների լուծման համար... պետք է մանդատ ստացած մեկ պետությունը իր ձեռքը վերցնի այս երեք պետությունների կառավարությունները և պետք է պահպանել կառավարությունը մի որոշ ժամանակաշրջանում, այսինքն՝ տասը տարի... Այդ ժամանակաշրջանը վերջացնելուց հետո, պետք է նորից նայել ընդհանուր դրությանը... բայց հարցերը պահանջում են շուտափույթ լուծում։ Եվ մի քանի որոշումներ պետք է կատարել որքան կարելի է շուտ... Անգլիան արդեն ծովային ուժ է հաստատել Սև և Կասպից ծովերում...»[12]։

Անտանտի գաղութարարները, որոնք փոխարինեցին գերմանա-թուրքական բանդաներին, իրենց գործը նույնպես սկսեցին Անդրկովկասի աշխատավորների ունեցվածքի հափշտակումից։ «...Բրիտանական զինվորական իշխանությունները Ղարսից մեծ պարտիաներով դուրս են տանում... բամբակ, ավտոմոբիլային գույք և այլն...»[13]։

Անդրկովկասի բրիտանական ուժերի հրամանատարությունը, դաշնակցական սպասավորների եռանդուն օգնությամբ, Դենիկինի բանակին էր ուղարկում բնակչությունից հափշտակված նյութական ահագին պաշարներ։

Իմպերիալիստական շրջմոլիկները ուժեր էին հավաքագրում Սովետական Ռուսաստանի դեմ գործող ինտերվենտներին օգնելու համար։ Նրանք Անդրկովկասի մարդկային ռեզերվները և ռազմամթերքները տրամադրում էին Դենիկինի կամավորական բանակին՝ Կարմիր Բանակի դեմ կռվելու համար։ Ահա, այս նպատակով էր, որ բրիտանական զինված ուժերի հրամանատար, գեներալ մայոր Կորին մերթ Թիֆլիսում էր, մերթ Երևանում, մերթ Բաքվում։ Նրան

12 Տե՛ս ՍՄԿՊ կենտկոմին առընթեր Մարքսի հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 33, թղթապանակ 7, թ. 7—10։

13 Հայկական ՍՍՌ Պետ. կենտ. արխիվ, ֆ. 200, դ. 19, թ. 11։

օգնում և միջոցներ էր տրամադրում նաև դաշնակցության ապիկար կառավարությունը։ «...Համաձայն այն քաղաքականության, որը ձեզ արդեն հայտնի է, ես պետք է հայտնեմ Ձեզ, որ այժմ Նախիջևանում և երկաթուղու գծի վրա գտնվող բրիտանական զորամասերը ետ են կանչվելու մոտիկ օրերի ընթացքում։ Այն, ինչ ես տեսել եմ, այն համոզմունքն եմ ստացել, որ ապահովությունը և խաղաղությունը շարունակվելու են գավառում ձեր ադմինիստրացիաների միջոցով»,—գրել է գեներալ Կորին դաշնակցության կառավարությանը։

Անգլիական ինտերվենտների զինվորական հրամանատարության միսիաները և ջոկատները գտնվում էին Հայաստանի բոլոր շրջաններում. նրանք հանդիսանում էին հանրապետության զորքերի տնօրինողները և միաժամանակ անկարգությունների կազմակերպման հեղինակները։ Բազմաթիվ փաստերից բերենք 1919 թ. մայիսի 24-ին Սանահին կայարանի հերթապահի հեռագիրը Վրաստանի երկաթուղիների վարչության պետին.

«Չնայած Հայաստանի անգլիական պարետի կողմից սիստեմատիկ բողոքություններին՝ իմ և դեպոյի պետի նկատմամբ, վրացական շոգեքարշերի կապակցությամբ, այսօր՝ մայիսի 24-ին, կրկնվեց նույնը, երկու շոգեքարշ՝ № 1432 և № 4358, պարետը պահանջեց ուղարկել անմիջապես, բայց մենք մերժեցինք, ըստ որում նա զուրս բերեց մտրակներով և հրացաններով զինված զինվորներ և սպառնում էր ծեծով կամ զենդակահարությամբ, եթե գնացքը 30 րոպեի ընթացքում չուղարկվի, և ավելացրեց, որ Թիֆլիսից ուղարկված բոլոր անգլիական գնացքները պետք է բաց թողնել վրացական շոգեքարշերով և առանց ուշացման, որ այդ մասին նա ունի կարգադրություն։ Գտնվելով ծառայության այսպիսի պայմաններում և կործանման եզրին, մենք զրկված ենք կանոններին և ձեր ցուցումներին համաձայն գործելու հնարավորությունից և հատկապես խնդրում ենք կարգավորել շոգեքարշերը, զգուշացնել կայարանների պարետներին, իսկ պատճենը մեզ, առանց որի աշխատելն անհնար է։ Սպասում ենք ձեր շտապ կարգադրությանը, հակառակ դեպքում ենթակա ենք լուրջ անախորժությունների։ Հատկապես խնդրում ենք հանդես գալ ի պաշտպանություն պրոֆմիությունների ընդհանուր և անձնական իրավունքների։ Մինչև վերջնական կարգադրության ստացումը Հայաստանի պարետի համառ պահանջով գնացքները բաց կթողնվեն, քանի որ հակադրվելու համար ուժեր չունենք»[14]։

Անգլիական ինտերվենտները լավատեղյակ լինելով Անգլիայում և զորքերում կատարվող դեպքերի մասին և իմանալով, որ իրենց շուտով կվիճակվի թողնել Անդրկովկասի սահմանները, սկսեցին զրաղվել թալանով։ Նրանք 1919 թ. գարնանը Ալավերդուց Անգլիա էին տեղափոխել տասներկու հազար փութ կարմիր պղինձ[15]։

1919 թ. դաշնակցական զորքերի հրամանատար, գեներալ Նազարբեկովը Հայաստանի ռազմական մինիստրին հայտարարում էր՝ «Գեներալ-մայոր Միլկովի զեկուցումով բրիտանական ռազմական իշխանությունը Ղարսից մեծ պարտիաներով զուրս է բերում փամփուշտներ և ականներ, ինչպես նաև բամբակ, ավտոմոբիլների զույգ և այլն»։

---

14 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 109, թ. 251։

15 Նույն տեղում, թ. 208։

Դաշնակցական կառավարությունն իր հակաժողովրդական քաղաքականության հետևանքով նախկին ռուսական Հայաստանի տերիտորիայի վրա շրջում էր վախով, դաղտագողի, անգլիական սվիններին օգնությամբ։ Իսկ այնտեղ, որտեղ աշխատավորական մասսաների և այլազգի ու թուրքական բնակչության կողմից հանդիպում էր ուժեղ դիմադրության, դիմում էր անգլիական զենքի օգնությանը, փոխարենը երդվում անկեղծ նվիրվածությամբ ծառայել հզոր բրիտանական իմպերիալիզմի շահերին։

Ներքին և արտաքին քաղաքականության մեջ դաշնակցությունը լինելով օտարերկրյա ինտերվենտների դաղութային քաղաքականության կույր գործիքը, անընդունակ էր պաշտպանելու հայ ժողովրդի շահերը և, ընդհակառակը, ջանասիրաբար վաճառում էր հայ ժողովրդի նյութական արժեքներն ու դավաճանում նրա շահերին։

Հայաստանն արևմտա-եվրոպական իմպերիալիզմի դաղութի վերածվելու ձգտումն իր արտահայտությունն է գտել նաև կապիտալիստական երկրների հետ առևտրական կապեր հաստատելու համար Եվրոպա մեկնած հայկական պատվիրակության տնտեսական հանձնաժողովի անդամների զեկուցագրերում և փաստաթղթերում։

Հայաստանում օտարերկրյա ինտերվենտների ներկայացուցիչների խոստումնալից հայտարարությունները փուչ դուրս եկան։ Արևմտյան Եվրոպան, առանց կանխիկ վայրուտայի, չէր ուզում նույնիսկ հուսալ դաշնակների հետ առևտրական հարաբերություն հաստատելու մասին։ Արևմտյան երկրները հրաժարվում էին ընդունել Անդրկովկասի հանրապետությունների դրամանիշները, որովհետև վերջիններս ամբողջապես արժեքազրկվել էին։ Այդ պատճառով անգլո-ամերիկյան ինտերվենտները ձգտում էին ամեն մի ֆունտ ստեռլինգի դիմաց Անդրկովկասից և Հայաստանից տանել հումքի և ապրանքների հսկայական քանակություն և իրենց ձեռքը վերցնել առևտրի մոնոպոլիան։

Օտարերկրյա ինտերվենտներն իրենց տիրապետության կարճատև ժամանակաշրջանում բազմաթիվ խոստումներ տվեցին հայ ժողովրդի ոխերիմ թշնամի դաշնակցության կուսակցությանը՝ սկսած տերիտորիալ անձեռնմխելիությունից, «ծովից-ծով Հայաստանից»։ Սակայն դրանից ոչինչ չստացվեց, ընդհակառակը, կործանման եզրին հասավ հայ ժողովուրդը։ 1919 թ. գեներալ Դենիկինը թողնելով Անդրկովկասը, իր հրաժեշտի ճառում Հայաստանի վարչակառավարողներին խորհուրդ էր տալիս. «Ձեր երկրի տերիտորիայի ավելացման գործում պետք չէ շտապել, ժամանակին ամեն ինչ կլինի։ Անհրաժեշտ է ամրապնդել բոլոր ստացածը, իսկ հետո՝ շարժվել առաջ... դուք դիմացել եք 100-ավոր տարիներ և, եթե չլինի աստծո կամքը՝ դուք կկորչեք»[16]։

Իսկ ի՞նչ էր ստացել հայ ժողովուրդը, ոչինչ, բացի սովից, համաճարակից ու կործանման եզրին հասնող տնտեսությունից։ Եվ այդպիսի պայմաններում ազգի շահերը ծախող Ալ. Խատիսյանը մեծ երախտագիտությամբ պատասխանում է Դենիին. «Սիմպատիայի անկեղծ զգացմունքով Ձեր առջև մենք շնորհակալություն ենք հայտնում բրիտանական բանակին։ Ես խնդրում եմ այդ զգացմունքը հայտնել և գեն. Կորիին, և Միլնին...»[17]։

---

16 ՀՍՍՌ ԿՊԱ, ֆ. 200, գ. 96, թ. 79։

17 Նույն տեղում։

Դաշնակցական բախտախնդիրներին երբեք չէր հետաքրքրում Հայաստանի տնտեսական վիճակը, հայ ժողովրդի ծայր աստիճանի աղքատությունը։ 1918—1920 թթ. «բնակչության կեսը կազմում էին փախստականներ, որոնք հարյուրներով սովամահ էին լինում։ Երկիրը կանգնած էր ֆիզիկական ոչընչացման եզրին։ 1919 թ. բնակչության յուրաքանչյուր հազարին ծնվում էր 8,7, մեռնում՝ 204,2 մարդ, այսինքն՝ բնակչության կորուստը արտահայտվում էր 195,5 մարդով, յուրաքանչյուր հազարին»[18]։

Բնակչության վիճակն այնքան ծանր էր, որ նույնիսկ արևմտահայ բուրժուազիայի օրգան «Աշխատանք» թերթը, 1919 թ. փետրվարի 25-ին իր էջերում ողբում է ինտերվենտների տիրապետության հետևանքները։ Նա գրում է՝ «Ոչ մեկ իշխանություն ունինք, ոչ մեկ աշխատանք, ոչ մեկ բարեկամ, Սով-արքան է միակ իշխանությունը, որ կոչնչացնե ահա, մեր ցեղը, Սով-արքաս է, որ կթաղե ամեն օր հազարավոր հայ կյանքեր, սակավ զարհուրագին անապատի վերածելով և միևնույն ժամանակ հարցական դարձնելով մեր ազգովին ապրելու բովանդակ գոյությունը...

Ամեն տեղ ամեն ոք կտեսնե Սով-արքան, որ անդութ ու դաժան իր համայն ավերը կտարածե։ Մարդկային թշվառական անթիվ բազմությունները կթափառեն մեր շուրջը մեռելատիպ ու բոպեն մը ետքը անկենդան։ Սովորական երևույթ է այլևս լսել ու տեսնել կենդանիներու արյան հափշտակումը ձեռքե-ձեռք, ոսկորների կրծոտումը, սատկածներու լեշերով սնանիլը, կամ կոիվ և մարդասպանություն կատվի մը համար։ Առասպելական չէ այլևս, ավաղ, զարհուրապես իրական տեսնել ձիու աղբերուն վրա հավաքված մանուկների բազմություններ, տրեխ կրծողներ, հող լիզողներ և անթաղ մեռելներու դիակներին մոտեցողներ»։

ԱՄՆ-ի իմպերիալիստներն իրենց գործակալ դաշնակների աջակցությամբ, 1919—1920 թթ. Հայաստանից տարել են ավելի քան 160000 փութ բամբակ, 40000 հատ կաշի, 150000 հատ ոչխարի մորթի։ Բացի դրանից, նրանք կողոպտել և երկրից դուրս են տարել զանազան տեսակի դինիներ, կոնյակ, սպիրտ, բուրդ և մեծ քանակությամբ գորգեր[19]։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստներն այդպիսի կողոպտիչ քաղաքականություն էին վարում ոչ միայն հայ ժողովրդի, այլև Ադրբեջանի, Վրաստանի և Ռուսաստանի՝ ժամանակավորապես օկուպացված մյուս շրջանների աշխատավորների նկատմամբ։

Անգլո-ամերիկյան ինտերվենտները Անդրկովկասում հաստատեցին ոստիկանական ծանր ռեժիմ։ Նրանք արգելեցին ժողովներն ու գործադուլները, ամենուրեք մտցրեցին մարմնապատիժներ և մահապատիժներ։ Հարյուրավոր կոմունիստներ նետվեցին բանտերը։

Այսքանից հետո էլ մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների կուսակցությունները, ինչպես նաև նրանց այսպես կոչված ազգային կառավարությունները, գործում էին դեմոկրատական ազատության, անկախության ու ազգերի ինքնորոշման կեղծ դրոշակի տակ, իսկ իրականում վարում էին շովինիստական քաղաքականություն։ Դաշնակների, մենշևիկների ու մուսավա-

---

18 «Պրավդա», 25 նոյեմբերի, 1945։

19 Խ. Հ. Բաղալյան, Դաշնակների կոնտրոլյուցիոն գործունեության մի քանի փաստերի մասին 1918—1920 թթ., Հայպետհրատ, 1955, էջ 59։

թականների տիրապետության մոտյալ շրջանը հարուստ է արյունահեղություններով, բռնություններով ու դաղանություններով։ Զանգեզուրի, Նախիջևանի, Դարաբաղի ազդամիջյան քայքայիչ կռիվներում հրկիզվել են հարյուրավոր բնակավայրեր, գյուղեր, ոչնչացվել հազարավոր խաղաղ բնակիչներ, ծերեր ու երեխաներ։ 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքվի խորհրդի նիստում Ս. Օրջոնիկիձեն պատմել է. «Ես ինքս վկա էի, թե ինչպես դժբախտ կանանց և մանուկներին, որոնք ոչ ոքի վնաս չէին տվել, գցում էին հորերը, որ այնտեղ սարսափելի տանջանքների մեջ նրանք մեռնեին։ Այսպես էին անում մուսավաթականները և դաշնակները»[20]։

Բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների և նրանց հովանավորող ինտերվենտների կործանարար քաղաքականությունը օբյեկտիվորեն նպաստեց այն բանին, որ ավելի բարձրանա բանվորների և գյուղացիների հեղափոխական զգոնությունը, նոր լիցք տրվի զինված ապստամբության նախապատրաստությանը։

1919—1920 թթ. հեղափոխական իրադարձությունները և մասսաների զինված ապստամբություններն Անդրկովկասում ամբողջապես բացասեցին կեղծ սոցիալիստների այն առասպելը, որ հնարավոր է դեմոկրատական պետություն ստեղծել կապիտալիստական հասարակարգի պայմաններում։

Սոցիալիզմի և դեմոկրատիայի քողի տակ մենշևիկները և էսեռները խոսքով իրենց ներկայացնում էին որպես աշխատավորության պաշտպաններ, սակայն գտնվելով իշխանության գլուխը, ոչ միայն գործնականում չկարողացան լուծել սոցիալական և ազգային բնույթի որևէ հարց, այլ իրենց բացահայտեցին որպես ժողովրդի թշնամիներ, հայրենիքի դավաճաններ, շահագործողների շահերը պաշտպանողներ և իմպերիալիստների քաղաքականությունն իրականացնողներ։

Դաշնակցելով իմպերիալիզմի և կալվածատերերի հետ, մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները կատաղորեն դուրս եկան աշխատավորության շահերի և սովետական իշխանության դեմ։

Երբ Ադրբեջանում հռչակվեց սովետական իշխանություն, մուսավաթականների, մենշևիկների և դաշնակների օգնությամբ նոր կարգերի դեմ ոտքի հանվեցին խան-բեկական ռեակցիոն ուժերը, որոնք շուտով ջախջախվեցին։

Մենշևիկների և դաշնակների թալանչիական ու ավազակային քաղաքականությունը վերջ տրվեց ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Անդրկովկասի աշխատավորների միասնական պայքարի շնորհիվ։ Մեծ Լենինի զինակից անմահ Ստեփան Շահումյանը 1918 թ. օգոստոսին գրել է. «Ռևոլյուցիոն Սովետական Ռուսաստանը... կգա, ոչ թե ճանաչելու գերմանա-Թուրքերին կամ անգլիացիներին, որպես Բաքվի տերերի, այլ արտաքսելու համար թե՛ մեկին և թե՛ մյուսներին, որպեսզի վերականգնի Բաքվի Ռուսաստանի հետ կապի միասնությունը և նորից հաստատի այստեղ և ամբողջ Անդրկովկասում Սովետական բանվորա-գյուղացիական սոցիալիստական իշխանություն։ Մենք չենք կորցնում մեր հույսերը, որ այս դեռ կլինի»[21]։

Անդրկովկասի ազատագրման պայքարում վճռական դեր խաղաց բոլշևիկների կուսակցությունը։ Գտնվելով ընդհատակի ծանր պայմաններում, իր

---

20 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, 1950, էջ 33։

21 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Ընտիր երկեր, Հայպետհրատ, 1949, էջ 683։

կազմակերպչական և ագիտացիոն-պրոպագանդիստական եռանդուն աշխատանքով կուսակցությունը համախմբում էր ժողովրդական մասսաներին, մերկացնում դաշնակների, մենշևիկների և մուսավաթների դավաճանական քաղաքականությունը։

Բոլշևիկյան կուսակցությունն անխախտ պայքար էր մղում շովինիզմի և նացիոնալիզմի դեմ, ամրացնում Ռուսաստանի սովետական ռեսպուբլիկայի և Անդրկովկասի ժողովուրդների անխախտ բարեկամությունը ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո աշխատավորներին տանում ազգային-ազատագրման լենինյան ուղիով։

«Տասնամյակներ շարունակ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները հավատարիմ են եղել մեր պարտիայի լենինյան դրոշին, նրանք վճռական պայքար են մղել մենշևիկների-էսեռների դեմ, մուսավաթականների և դաշնակների նման ամեն կարգի նացիոնալիստական խմբավորումների ու հոսանքների դեմ»[22]։

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման գործում բացառիկ դեր խաղացին Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակիցներ Ստ. Շահումյանը, Մ. Ազիզբեկովը, Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ա. Միկոյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Մ. Օրախելաշվիլին, Մ. Ցխակայան և բոլշևիկ ռևոլյուցիոներների լենինյան պլեադայի շատ մարտիկներ, որոնց գլխավորությամբ Անդրկովկասի ժողովուրդները հերոսական պայքարի ելան և երկրամասից մեկընդմիշտ վռնդեցին օտարերկրյա ինտերվենտներին ու գլխովին ջախջախեցին հակառևոլյուցիոն ուժերին, Անդրկովկասում հաստատեցին սովետական իշխանություն և ձեռնամուխ եղան սոցիալիզմի կառուցման մեծ գործին։

В. Л. АВАКЯН

ХИЩНИЧЕСКАЯ ПОЛИТИКА АНГЛО-АМЕРИКАНСКИХ ИНТЕРВЕНТОВ В ЗАКАВКАЗЬЕ (1919—1921)

(Резюме)

Вследствие хищнической политики англо-американских интервентов, прямого грабежа народов, вывоза большого количества материальных ценностей, осуществляемых при активной помощи дашнаков, меньшевиков и муссаватистов, народное хозяйство Закавказья в 1919—1921 гг. было на грани разрушения.

Империалисты не только грабили Закавказье, но и стремились задушить революционное движение, воспрепятствовать сближению Закавказья с Советской Россией, с тем чтобы превратить Закавказье в плацдарм для борьбы с Россией и захвата среднеазиатских территорий.

Но народы Закавказья, хорошо понимая предательские планы империалистов и их приспешников—дашнаков, меньшевиков и муссаватистов, с помощью великого русского народа боролись против интервентов и антиреволюционных сил за установление Советской власти.

22 Ն. Ս. Խրուշչով, Ճառ Անդրկովկասի ռեսպուբլիկաների դյուղատնտեսության առաջավորների խորհրդակցությունում, 1961 թ., փետրվարի 7-ին, Թբիլիսի քաղաքում—«Սովետական Հայաստան», 12 փետրվարի, 1961։